եւ 'ի նոցանէ առ զոր խնդրէրն , եւ նոքա եկեալ յԵրուսաղէմ առին զդրամն իւրեանց 'ի Պատրիարքէն ։ Եւ յերկիւղէ նորին փակեցան դրունք քաղաքին և կարգեցան պահապանք , յաւելաւ սովն և տագնապ նուազութեան ջրոյ ։ Բանացան այլազգիք 'ի վերայ երից վանօրէից , պահանջելով դրամս և զայլ իրս , և նոցա անճարացեալ գումարեցան 'ի խորհուրդ , և գրեցին աղերս առ իւրաքանչիւր ազգայինս 'ի Կոստանդինուպօլիս , զի թերեւս մարթասցին գտանել ազատութիւն ինչ ։ Իսկ զկնի տօնի Ս. Զատկի եհաս յԵրուսաղէմ լուր մահուան Ճէզար Փաշայի , և 'ի տեղի նորա յաջորդելոյ Արապկերցի Իսմայիլ Փաշայի արձակումն ոմանց յերեւելեաց 'ի բանտէ , և Օթմանին մնալ անդ ։ Եւ յուղեւորիլ ուխտաւորաց 'ի հայրենիս իւրեանց 'ի ցամաքէ , եղբարք եւ ազգականք Ապուղօշի դիմեցին բազմութեամբ 'ի վերայ նոցա , և կալեալ բռնութեամբ և անարգանօք դարձուցին զնոսա յԵրուսաղէմ , և խնդրէին 'ի վանականաց զեղբայրն իւրեանց · միաբանեալ էր ընդ նոսա և Մուֆթի քաղաքին ։ Հայք եւ Յոյնք գրեցին գիր աղաչանաց առ Բդեշխն Իսմայիլ , և առաքեցին զԳաբրիէլ և զՄետրոփանոս վարդապետս յԱքքէ վասն ազատութեան առնն և վասն այլոց խնդրոց , եւ յերկարիլ միջոցին զայրացեալ Յոյն ուխտաւորաց դիմեցին 'ի վերայ փոխանորդի նոցին , եւ ձգեալ զնա արտաքս առեալ գնացին առ Մուֆթի քաղաքին , և աղմկեալ կոչէին անդ՝ թէ ընդէ՞ր արգելուք զմեզ 'ի ճանապարհաց մերոց , զի ոչ գոյ տեղի հանգստեան և ջուր ըմպելոյ 'ի քաղաքիս · գնացին անդ եւ թարգմանք , բազում աղաչանօք և խոստմամբ դրամոց հազիւ կարացին հաճել զմիտս նորա , այլ գիւղականք ոչ երբէք հաւանէին ընդ այն ։ Եհաս գիր 'ի բանտարկելոյ անտի թէ՛ թողէք զուխտաւորս , զի վարդապետքն ջանիւք մեծաւ աշխատին վասն ազատութեան իմոյ , գիւղականք ընդ այն եւս ոչ հաճեցան , մինչեւ առին յերաշխի զթարգմանս Հայոց և Յունաց , և այնպէս թոյլ ետուն ուխտաւորաց ելանել 'ի ճանապարհ և քաղաքապետն ընդ նոսա ։ Եւ յետ մեկնելոյ ուխտաւորաց 'ի ճանապարհ երից աւուրց , գիւղականք արգելին առ իւրեանս զթարգմանս , և 'ի սադրելոյ Մուֆթիին և քաղաքապետին , ետուն գիր երաշխա-